



Student/Registration Number

Centre Number

2009 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Tuesday 20 October: 2 pm Eastern Standard Time

Reading Time: 10 minutes

Working Time: 2 hours and 50 minutes

- *You have 10 minutes to read all the papers and to familiarise yourself with the requirements of the questions. You MUST NOT write during this time.*
- *Monolingual and/or bilingual printed dictionaries may be consulted during the reading time and also during the examination.*

Section 1: Listening and Responding (30 marks)

Instructions to Students

1. Allow approximately 50 minutes for Section 1.
2. Write all your answers to the questions in Section 1 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ALL questions in Part A and Part B.
4. Answer Part A in ENGLISH and Part B in ARMENIAN.
5. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet.
6. All question booklets will be collected at the end of the examination.

Part A

20 marks

Attempt Questions 1–5

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- *understand general and specific aspects of texts by identifying and analysing information and convey the information accurately and appropriately*
-

You will hear FIVE texts. Each text will be played twice. There will be a short break between the first and second playings in which you may make notes.

Listen carefully to each text and then answer the questions in ENGLISH.

Text 1

1. Using the information in the text complete the notice below.

3

You may
make notes in
this space.

<p style="text-align: center;">NOTICE</p> <p style="text-align: center;">Habitat For Humanity</p> <p style="text-align: center;">Work for Volunteers in Armenia</p> <ul style="list-style-type: none">• You should be _____ to _____ years of age.• You must be available for _____ weeks in June.• You must agree to pay for _____ and _____.• You must obtain _____. <p style="text-align: center;">APPLY EARLY TO AVOID DISAPPOINTMENT!</p>
--

Text 2

2. What will Hayk do next year?

1

- (A) Get a part time job
- (B) Take a year off work
- (C) Drop out of university
- (D) Continue his university studies

Text 5

5. (a) Why is Mrs Panossian such a suitable guest for this particular radio program?

3

You may make notes in this space.

(b) What makes this such an effective interview?

5

BLANK PAGE

BLANK PAGE



Student/Registration
Number

--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Centre Number

--	--	--	--	--	--	--	--

2009 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 2: Reading and Responding (30 marks)

Instructions to Students

1. Allow approximately 1 hour and 15 minutes for Section 2.
2. Write all your answers to the questions in Section 2 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ALL questions in Part A and Part B.
4. Answer Part A in ENGLISH and Part B in ARMENIAN.
5. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet and on page 9.
6. All question booklets will be collected at the end of the examination.

Part A

20 marks

Attempt Questions 8–9

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- understand general and/or specific aspects of texts, by, for example, comparing, contrasting, summarising, or evaluating, and convey the information accurately and appropriately
-

8. Read the text and then answer in ENGLISH the questions that follow.

Պատմարան պրն. Յովհաննէսեան երկար տարիներ ուսումնասիրած է հայ ընտանիքէ ներս աւանդութեանց շուրջ: Իր ուսումնասիրութեանց շուրջ խմբագրութեան կը յանձնէ հետեւեալ յօդուածը:

Սիրելի՛ երիտասարդ-երիտասարդուհիներ,

Հայաստանի անկախացումէն ետք կ'ապրինք վերածնունդի ու զարթօնքի շրջան մը: Այլասերման եւ ինքնութիւնը պահպանելու ակնյայտ բախում մը կայ:

Հաւատացած եմ որ մեր ինքնութիւնը պահպանող լաւագոյն ազգակիները՝ մեր պապենական սովորութիւններն եւ մեր հինաւուրց աւանդութիւններն են:

Դարեր շարունակ ամուր կառչած մ'նացած ենք անոնց:

-Աստուածալալել մօտեցում կեանքին հանդէպ:

-Յարգանք տան երեցներուն հանդէպ:

-Անվերապահ սէր ու յարգանք ծնողաց:

-Խորիմաստ հասկացողութիւն եւ արժեւորում մայրենի լեզուի նկատմամբ:

-Հայ եկեղեցւոյ կրօնական ուսուցումներուն հանդէպ երկիւղ ու սէր:

Այս բոլորը եղած են հիմնաքարերը մեր ինքնութեան եւ աւանդութեանց:

Այսօր արդեօք որքանով կը կիրարկուին այդ բոլորը:

Վերջին քսան տարիներուն մեր աւանդութեանց անհետացումն արտասովոր եւ իւրայատուկ երեւոյթ մը եղած է, չենք կրցած մեր պապերու կտակը պահպանել:

Արեւմտեան երկիրներու մէջ հաստատուելով դիւրաւ ընդօրինակած ենք տեղւոյն սովորութիւնները, օրինակած ենք անոնց ազրելակերպը, որոնք կը սպառնան մեր ինքնութեան: Կը վախնամ որ այս քայլը մեր ազգը պիտի ուղղէ դէպի ձուլման եւ անհետացման:

Դառն իրականութիւն է, որ հայութեան համար նոր դիմագիծ մը երեւան կուգայ եւ այսպիսով այդ նոր դիմագիծը կը փոխէ ու մոռցնել կուտայ մեր աւանդութիւնները:

Համոզուած ենք թէ իսկական հայ ըլլալու համար, պայման չէ լեզուն գիտնալ, աւանդութիւնները պահպանել, այլ բաւարար է հոգւով հայ մ'նալ:

Բաւ է որ..... Եան մականունը կը կրենք:

Question 8 continues on page 3

Question 8 (continued)


(c) To what extent do you agree with Mr Hovanissian that ‘a new profile of Armenians is emerging’? Support your answer with evidence from the text.

3

End of Question 8


BLANK PAGE

9. Read the text and then answer in ENGLISH the questions that follow.




Բարեւ Մարի ջան,

Յիշեցի որ անցեալ շաբաթ ծննդեանս տարեդարձն էր եւ որոշեցի քեզ գրել ու շնորհաւորել: Վստահ եմ որ նոյնիսկ առանց ինձ լաւ քէֆով տօնեցիք ծնունդդ: Ինչքան կուզէի որ հետզ լինէի: Միայն մի քանի շաբաթ է ինչ վերադարձել եմ Հայաստանից, բայց կարծես տարիներ լինի որ իրար չենք տեսել: Չեմ կարող հաշտուել այստեղի կեանքին եւ կարիքն եմ գգում մէկի հետ բաժանել իմ ապրումներս: Համայնարանում բոլորը կարծես ճանաչում են իրար եւ բոլորն էլ աւելի գիտելիքներ գիտեն քան ես: Մէկ խօսքով, մ'նայել եմ անընկեր: Երբեմն մտածում եմ թէ աւելի լաւ էր երբ Հայաստան չէի այցելում: Մի սխալուիք, Հայաստան այցելութիւնս հրաշալի էր: Այստեղ մէկը չկայ հետս խօսելու, ծնողներիս իսկ չեմ կարող պատմել իմ ապրումներս եւ գգացումներս: Մ'նայել ես միայն դու իմ հին ընկերուհիս:



Սիլվա ջան բարեւ,

Շնորհակալ եմ տարեդարձիս շնորհաւորականի եւ բարի մաղթանքներիդ համար: Մեկնումիցդ յետոյ բաւական երկար սպասեցի մինչեւ լուր ստացայ իմ հին ընկերուհուս մասին: Կարծես նորից տխուր ես ու ընկճուած: Յիշում ես ի՞նչ եմ ասել քեզ անցեալին երբ նման տրամադրութեան մէջ ես եղել: Թափ տուր ինքդ քեզ: Նայիր ինչ լաւ բաներ ունես շուրջդ: Իմացիր որ շատերը քեզ նախանձում են քո ունեցած բարիքների համար: Հայաստանում շատերը կը ցանկանային ապրել տաք եւ արեւոտ Աւստրալիայում: Դու մոռացել ես Հայաստանի երկար ու ցուրտ ձմեռները: Յիշիր որ բախտաւոր ես երբ ընտանիքդ հետո է: Թերեւս մի քանի տարի յետոյ դու կարող ես ընտրել թէ որտեղ կուզէիր ապրել, Հայաստանում թէ Աւստրալիայում, ես այդ ընտրութիւնը պիտի չունենամ: Դու ազատ ես, եւ ընտրելու հնարաւորութիւնը ունես: Իսկ եթէ համայնարան աւարտելուց յետոյ ցանկութիւն ունենաս Հայաստան գնալու եւ ապրելու, մի քանի տարի աշխատիր, ինչպիսի շօշափելի մի գումար եւ այն ժամանակ արի եւ ապրիր Հայաստանում: Բայց, լաւ մտածիր այդ քայլի մասին:



Մարի ջան,

Չարմանում եմ թէ կասկածում ես ինձ եւ չես հաւատում որ մարմնով այստեղ եմ իսկ հոգով իմ սիրած ու կարօտած ընկերներիս հետ: Ենթադրում էի որ գոնէ դու կը հասկանաիր:

Question 9 continues on page 7

Part B

10 marks

Attempt Question 10

When judging performance in this part, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates the capacity to:

- *understand general and specific aspects of a text by identifying, analysing, and responding to information*
- *convey information coherently (structure, sequence, accuracy and variety of vocabulary and sentence structure) and appropriately (relevance, use of conventions of the text type)*

10. Read the text and then answer in 150–200 words in ARMENIAN the question that follows.

Տաղանդների համերգը

Միայն չափերաւոր կարելի է անւանել անցեալ շաբաթ կայացած «Պոպ» երաժշտութեան խմբի համերգը: Ամբողջ մէկ տարի մեր երաժշտաւէր հասարակութիւնը սպասում էր այդ օրւան: Վերջապէս առիթ պիտի ունենայինք լսելու, վայելելու աշխարհով մէկ աղմուկ հանած այս «Պոպ» խմբին: Համերգի տոմսերը վաղուց էին սպառուել: Շատ «Երջանիկներ» մի քանի անբուն գիշերներ էին անցկացրել տոմսարկղի մօտ նւիրական տոմսերը ձեռք բերելու համար: Եւ ահա եկաւ այդ երջանիկ, անհամբեր սպասուած օրը: Համերգասրահը լեւի լեցուն էր հանդիսականներով: Մեծամասնութիւն էր կազմում երիտասարդութիւնը: Վերջապէս բեմը լուսաւորւեց եւ սկսեց մի խլացուցիչ եւ աղմկոտ երգով, որից ոչինչ չէր հասկացուում: Բեմում գտնուող խմբի անդամները պատահուած կիսամերկ հագուստներով էին: Անհասկանալի է, թէ ինչի՞ վրայ են նրանք ծախսում, համերգի հասոյթից ստացւած դրամը, եթէ ելոյթին համար անգամ մի կարգին հագուստ գնել չեն կարողանում: Իսկ ելոյթը ուղղակի խայտառակութիւն էր: Երաժշտութիւնը այնքան բարձր էր, որ երեւի հանդիսատեսի մեծ մասը կորցրեց մարդկային զգայարանքներից մէկը՝ «լսողութիւն»ը: Բայց դա չէր խանգարում երիտասարդութիւնը, ամէն մի կատարումից յետոյ էլ, աւելի բարձր աղմուկով ծափահարել, կոչել եւ սուրել:

Կատարեալ խենթանոց էր: Խենթանոց, ուր այդ սարսափելի աղմուկը կոչում է արւեստ: Հաւանաբար նրանք այդքան բարձր են երաժշտութիւնը նւագում, որպէսզի քողարկեն իրենց անտաղանդութիւնը:

Նման խայտառակ աղմուկից յետոյ ի հարկէ պէտք էր սպասել, որ հանդիսատեսը ետ կը պահանջէր իր դրամը: Սակայն ցաւօք սրտի, երէկ, առանց անյարմար զգալու հեռոտացոյցի ծրագրից յայտարարուեց, որ հանդիսատեսի պահանջով եւ խնդրանքով որոշել են եւս մէկ համերգ կազմակերպել:

You attended the concert reviewed in the above text. Write a positive review for a magazine using the information contained in the text.

Որպէս ունկրնդիր ներկայ էիր երաժշտական ելոյթին՝ Գրիբ', դրական ձեւով մի տեղեկագրութիւն թերթի համար, օգտուելով վերի յօդուածի տեղեկութիւններից:

You may make notes in this space.

BLANK PAGE

BLANK PAGE



Student/Registration Number

--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Centre Number

--	--	--	--	--	--	--

2009 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 3: Writing in Armenian (15 marks)

Instructions to Students

1. Allow approximately 45 minutes for Section 3.
2. Write your answer to a question from Section 3 in this booklet in blue or black ink or ball-point pen. Space is provided for you to make notes.
3. You must answer ONE question in ARMENIAN.
4. Write your student/registration number and the centre number (if required) on the front cover of this booklet.
5. All question booklets will be collected at the end of the examination.

Total marks – 15

Attempt ONE question from Questions 11–12

When judging performance in this section, the examiner(s) will take into account the extent to which the student demonstrates:

- *relevance and depth of treatment of ideas, information, or opinions*
 - *accuracy and range of vocabulary and sentence structures*
 - *the capacity to structure and sequence response and capacity to use conventions of the text type*
-

Answer ONE question from this section in 200–250 words in ARMENIAN.

- 11.** You have obtained your driving licence recently. Your school does not allow students to drive to and from school.

Write a letter to your principal in which you explain why students should be allowed to drive to school.

Արդէն ստացել ես ինքնաշարժ վարելու արտօնութիւն, սակայն դպրոցի տնօրէնութիւնը թոյլ չի տալիս աշակերտներին ինքնաշարժով դպրոց յաճախել:

Գրի՛ր մի նամակ տնօրէնին, որտեղ ներկայացնում ես ինքնաշարժով դպրոց գնալու առաւելութիւնները:

- 12.** The first Armenian cultural centre is to be opened in your city. You have been invited as the youth representative to speak on this occasion.

Write the text of your speech.

Զեր ապրած միջավայրի մէջ առաջին անգամ ըլլալով բացումը տեղի պիտի ունենայ «Հայ Մշակոյթի եւ Արուեստի» սրահի մը:

Իբրեւ երիտասարդներու ներկայացուցիչ պաշտօն տրուած է քեզի տալու պատգամ՝ Գրէ՛ խօսքիդ բնագիրը:

You may make notes in this space.

BLANK PAGE

BLANK PAGE

BLANK PAGE



2009 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 1: Listening and Responding

Transcript

Section 1, Part A

Text 1

«Հաբիդադ Փոր Հիւմանիթի» ծրագրին հիմնական աշխատանքը՝ կարօտեալ հայաստանցի բնտանիքներուն համար տուներ կառուցել է: Եթէ կը փափաքիս երեք շաբաթներու տեւողութեամբ Յունիս ամսուայ ընթացքին, աշխատակցիլ աշխարհի չորս կողմէ Հայաստան ժամանած հայ երիտասարդական խումբին՝ բարեհաճիր ամբողջացնել դիմումնագիրը: Թեկնածուները պէտք է ըլլան 16-19 տարեկան երիտասարդներ, ունենան ոչ մէկ առողջապահական հարցեր եւ հոգան իրենց կեցութեան եւ թուիչքի ծախսերը: Անհրաժեշտ է ներկայացնել վկայագիր, որ կը ստորագրէ թէ բոլոր պատուաստման սրտիւմները ստացուած են:

Text 2

Մերի - Բարեւ Հայկ, ի՞նչ է պատահել, անհանգիստ ես երեւում:

Հայկ - Բարեւ Մերի, անկեղծ ասաց ուզում եմ համալսարանը թողնել եւ աշխատել: Դրամի կարիք ունեմ:

Մերի - Շուտով արձակուրդները կը սկսեն, այդ մէկ ամիսը աշխատիր, ապա ուսումը շարունակիր:

Հայկ - Մերի, դու չես հասկանում ես շատ դրամի կարիք ունեմ, սովորելու ժամանակ չունեմ, չնայած ախտաւում եմ: Եւս երկու տարի եւ համալսարանը կաւարտեմ:

Մերի - Այդ դէպքում, 1-2 օր աշխատիր եւ ուսումը էլ շարունակիր:

Հայկ - Ձէ, դա էլ յարմար չէ, մտածում եմ մէկ տարի տարեկէտում վերցնել, աշխատել յետոյ վերադառնալ համալսարան:

Մերի - Հայկ, ի՞նչու չես վերադառնում ծնողներիդ մօտ, նրանք ուրախ կը լինեն քեզ օգնել: Իրենց հետ ապրելով տան վարձ վճարելու կարիք չես ունենար:

Հայկ - Մի քիչ անյարմար եմ զգում իրենց օգնութեանը դիմել:

Մերի - Հայկ, եթէ դու իրենց դիմես, վստահ եմ չեն մերժի: Քո ծնողները շատ մեծահոգի մարդիկ են:

Հայկ - Գիտես, դու ճիշդ ես, այդ դէպքում համալսարանն էլ ժամանակին կաւարտեմ, եւ ապա իմ աշխատելով բաւական դրամ կունենամ:

Text 3

Սագօ - *Լուսին, ես ի՞նչ պիտի ուսանիմ երկրորդական վարժարանը աւարտելէս ետք:*

Լուսին - *Չե՞ս փափաքիր ճարտարապետութիւն ուսանիլ:*

Սագօ - *Ի՞նչու չէ, լաւ առաջարկ է:*

Լուսին - *Անշուշտ, հարկաւոր է թուաբանութեան մէջ կարող ըլլաս: Կը կարծեմ որ քու թուաբանութեանդ նիշերդ շատ բարձր են արդէն:*

Սագօ - *Այո, թուաբանութիւն շատ կը սիրեմ, սակայն իմ փափաքս հարստանալ է:*

Լուսին - *Մի մտահոգուիր, ճարտարապետներ բարձր գումար կը շահին, սակայն շատ երկար ժամեր կ'աշխատին:*

Սագօ - *Գիտե՞ս, կը մտածէի հաշուապահ դառնալ եւ ապագային անձնական գրասենեակս ունենալ, սակայն օրական 8-9 ժամ գրասենեակիս մէջ բանտարկուած ըլլալու գաղափարը չեմ սիրեր:*

Լուսին - *Գործերու մեծամասնութիւնը այդպէս են այս դարուս:*

Սագօ - *Շատ լաւ պիտի ըլլայ եթէ տաղանդ պահանջող գործով մը զբաղիմ, օրինակ խոհարարութեամբ:*

Լուսին - *Բայց եթէ կ'ուզես հարստանալ, պէտք է անձնական ճաշարանդ ունենաս եւ շարաքով եօթը օր աշխատես:*

Սագօ - *Ընտանիքս շատ դէմ է այս խոհարարութեան գաղափարին: Ֆիզիքական աշխատանք պահանջող բոլոր գործերը նուաստացուցիչ կը համարեն:*

Լուսին - *Կարծեմ ընտրեցի ճարտարապետ ըլլալ:*

Text 4

- Աննա -** *Բարեւ Կարօ, ինչպէ՞ս ես, վերջերս չես երեւում:*
- Կարօ -** *Բարեւ Աննա: Գիտես ես հիմա դասերով զբաղւած եմ:*
- Աննա -** *Իսկապէ՞ս: Ես քեզ մի երկու օր առաջ կինօթատրոնում տեսայ Սիւզիի հետ: Անցեալ շաբաթ էլ համերգ էիք միասին գնացել: Երեւում է միասին էք պարապում:*
- Կարօ -** *Աննա չեմ հասկանում դու ինձ հետեւում ես, միթէ՞ իրաւունք չունեմ ընկերուհուս հետ տեղ գնալ:*
- Աննա -** *Ի՞նչ գաղտնապահն ես Կարօ, ես չգիտէի, որ այդ յիմար աղջիկը քո ընկերուհին է:*
- Կարօ -** *Սիւզին շատ խելացի եւ գեղեցիկ աղջիկ է, Աննա:*
- Աննա -** *Միայն քեզ նման միամիտ մէկի համար է նա խելացի, ե՞րբ պէտք է դու եւ սկսես մարդկանց ճանաչել:*
- Կարօ -** *Աննա դու ինձ վիրաւորում ես, ես քեզ ոչ մի վատ բան չեմ արել:*
- Աննա -** *Ձեմ հասկանում Կարօ դու ի՞նչ գտել ես այդ աղջկայ մէջ:*
- Կարօ -** *Գիտես Աննա, ես շատ հպարտ եմ, որ նա իմ ընկերուհին է: Բացի այդ նա ասում է, որ ինձ նման հետաքրքիր ընկեր երբեք չի ունեցել:*
- Աննա -** *Գիտեմ, այդ նոյն բանը նա ասել էր Արամին, Աշոտին, Սամուէլին եւ Հայկին:*
- Կարօ -** *Ձեմ հաւատում:*
- Աննա -** *Մի երկու շաբաթից կը հաւատաս: Սիւզին քեզանից կը ձանձրանայ եւ դու էլ կը դառնաս իր հերթական զոհերից մէկը:*

Text 5

- Հաղորդավար - Բարեւ յարգելի ունկընդիրներ, մեր ուստիօ-ժամի «Դուն եւս այդ կրնաս» ծրագրին: Սրտանց կը բարեւենք բոլորիդ, մանաւանդ երիտասարդ մեր մայրերուն, որոնք այս պահուստ տնային աշխատանքներով տարուած են: Այսօր մեր ուստիօ-ժամի հիւրն է Տիկ. Փանոսեան, ան մեծ մայր է, հիանալի անձնաւորութիւն է: Եկէք տեսնենք թէ ինչու: Բարի եկած էք տիկ. Փանոսեան:
- Տ. Փ. - Ծնորհակալութիւն ձեր գնահատական խօսքերուն: Կ'ուզեմ շեշտել թէ ես հիանալի անձնաւորութիւն մը չեմ:
- Հաղորդ. - Շատ համեստ էք տիկ. Փանոսեան, ներեցէք չուզեցի ձեր համեստութիւնը վիրաւորել: Կրնա՞ք ներկայացնել ձեր կեանքի վերջին տասը տարիներու գործունէութեան շուրջ:
- Տ. Փ. - Շատ բարի, դեռ պատանի հասակէս զգացած եմ, որ մեծ հակում ունեցած եմ ուսման հանդէպ, սակայն միջավայրը եւ նիւթական պայմանները թոյլ չեն տուած որ հասնիմ նպատակիս:
- Հաղորդ. - Իսկ ի՞նչ էր ձեր երազը:
- Տ. Փ. - Բարձր ուսման մակարդակի հասնիլ եւ մանկավարժ դառնալ:
- Հաղորդ. - Եւ ի՞նչպէս կրցաք հասնիլ հոն:
- Տ. Փ. - Շատ դիւրաւ, 55 տարեկանիս կրցայ մտնել համալսարան եւ մանկավարժական թէ հոգեբանական գոյգ մարզերուն մէջ վկայուեցայ լաւագոյն նիշերով: Ըրածս մեծ բան մը չէր:
- Հաղորդ. - Բայց խնդրեմ մի դադրիք, շարունակեցէք, շատ հաճելի է աւելի լսել ձեր փայլուն յաջողութիւններու մասին:
- Տ. Փ. - Կը հաւատամ կեանքի մէջ չկայ որեւէ փափաք, որուն հասնիլը անկարելի ըլլայ: Ուր կամք հոն կարելիութիւն: Իւրաքանչիւր անհատ ինչ տարիքի ալ ըլլայ, կրնայ հասնիլ այն խտեպին, որ չէ կրցած իրականացնել ճիշդ ատենին:
- Հաղորդ. - Իսկապէս, դուք, կամքի տէր, խիստ հետաքրքրական անձնաւորութիւն էք: Ծնորհակալութիւն ձեր ժամանակի համար: Ձեզի առիթը տանք, որ վերադառնաք ձեր դասարանը եւ աշակերտութեան:
- Տ. Փ. - Ծնորհակալ եմ, չէի կարծեր, որ այսքան երկար կրնայի խօսիլ:
- Հաղորդ. - Վստահ եմ թէ մեր ունկընդիրներուն եւ նա մանաւանդ երիտասարդ մայրերուն տպաւորած եւ քաջալերած պիտի ըլլաք այսօրուայ ձեր խօսքերով: Յաջողութիւն ձեզի:

Section 1, Part B

Text 6

Արամ - *Լենա, նայիր ինչ սիրուն է այս տեսարանը:*

Լենա - *Իսկապէս գեղեցիկ են ծովի ալիքները, մաշկած ժայռերը, դուրս ջուրի կապոյտ գոյնը խառնուած մայրամուտի արեւի կարմիր ճառագայթների հետ: Ափսոս որ Աչոտ չկարողացաւ մեզ հետ գալ: Եթէ կարողանայ աշխատանքի մտնել թերեւս յաջորդ տարի միասին կգնանք: Ինքը ծովափը եւ ձկնեղենները շատ է սիրում:*

Արամ - *Կերակուրի մասին հիմա մի խօսիր, ի՞նչ արժան եւ համով էր երեկուայ մեր կերածը:*

Լենա - *Աչոտին կարօտել եմ, լաւ կը լինէր իր հետ խօսելինք:*

Արամ - *Մոռանում ես, այստեղ հեռաձայն չկայ, գրենք իրեն: Վստահ եմ կուրախանայ:*

Լենա - *Զգոյշ պէտք է լինենք, թէ ինչ ենք գրում իրեն: Մեր շքեղ հիւրանոցի մասին բան չասենք, լաւ գիտես թէ վերջերս նեղ նիւթականի պայմանների մէջ էր Աչոտը:*

Արամ - *Ուիկիս դու գրիր բացիկը (postcard) իրեն, աւելի գիււանագէտ ես դու:*

Text 7

[Դուռը կը գարնուի]

Դաւիթ - Բարի լոյս Տիկին Մամիկոնեան՝ ժամադրութիւն ունէի ձեր հետ եթէ կը յիշէք:

Տ. Մ. - Այո, անշուշտ դաւիթ, հրամմէ ներս, կ'ուզէիր ապագայի ծրագիրներուդ մասին խօսիլ, չէ՞: Բնչպէս կրնամ օգտակար ըլլալ:

Դաւիթ - Տիկին Մամիկոնեան շատ վստահ չեմ եթէ յաջող համալսարանական պիտի կրնամ ըլլալ: Ընտանիքս սակայն, կը ստիպէ ինծի որ համալսարան յաճախեմ:

Տ. Մ. - Ես համաձայն եմ իրենց հետ Դաւիթ, ըսեմ թէ Բնչու: Ըսած էիր ինծի թէ հայրդ փաստաբան է եւ դուն ալ կ'ուզես փաստաբան ըլլալ:

Դաւիթ - Ճիշդ է, ուրեմն իր հետ աշխատելով կրնամ փաստաբան ըլլալ:

Տ. Մ. - Կը մոռնաս երկրի օրէնքները, փաստաբան ըլլալու համար, հարկաւոր է ուսանիլ առնուազն հինգ տարի:

Դաւիթ - Ձէի երեւակայեր.....

Տ. Մ. - Առանց համալսարանական վկայագրին՝
- Դատարան պիտի չկրնաս ներկայանալ,
- Փաստաբաններու միութեան անդամ պիտի չկրնաս ըլլալ,
- Լիազօրուած պիտի չըլլաս պաշտօնական թուղթեր ստորագրելու,
- Անձնական գրասենեակդ պիտի չունենաս,

Դաւիթ - Օ՛.....ուրեմն այդպէս.....

Տ. Մ. - Նկատի առ նաեւ, որ եկամուտդ առանց համալսարանական վկայականին շատ հնչին գումար մը պիտի ըլլայ: Նաեւ վկայականը թէ քեզի եւ թէ ծնողացդ համար հպարտութիւն մը պիտի ըլլայ:

Դաւիթ - Կածեմ կրցաք զիս համոզել: